**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**
**/2-րդ հանրային լսման/**

**«Նազարյան քուլինգ սիստեմս» ՍՊԸ-ի  կողմից ներկայացված՝Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոցի 10/18 հասցեում նախատեսվող պահեստային շինությունների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ**

ք. Երևան «04» փետրվարի 2026թ.

Կազմակերպված երկրորդ հանրային լսմանը մասնակցում էին՝

- հանրային լսման պատասխանատու, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը,
- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ-էկոլոգ, Էլլադա Արամյանը,
- Էրեբունի վարչական շրջանի աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը,
- «Նազարյան քուլինգ սիստեմս» ՍՊԸ -ի ճարտարապետ Ա Մակարյանը,
- «Նազարյան քուլինգ սիստեմս» ՍՊԸ- ի ներկայացուցիչներ Արթուր Մինասյանը և Լ. Ղարիբյանը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (03.05.2024թ., այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգով՝ 2026թ. փետրվարի 4-ին ժամը 11:00-ին Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Նազարյան քուլինգ սիստեմս» ՍՊԸ- ի կողմից Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոցի 10/18 հասցեում նախատեսվող պահեստային շինությունների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը, ով հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոցի 10/18 հասցեում նախատեսվող պահեստային շինությունների իրականացման աշխատանքներ: «Նազարյան քուլինգ սիստեմս» ՍՊԸ- ի կողմից ներկայացված նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Վերոգրյալի հիման վրա՝ Օրենքով և Որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ 2025 թվականի սեպտեմբերի 15-ին, ժամը 11:00-ին Երևան, Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում կայացել է նախատեսվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային լսումը: Այդ լսման արդյունքում 2025 թվականի հոկտեմբերի 23-ի N 430-Ա որոշմամբ Երևան քաղաքի ավագանին «Նազարյան քուլինգ սիստեմս» ՍՊԸ- ի կողմից Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոցի 10/18 հասցեում նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել է իր նախնական համաձայնությունը:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններ կարծիքներ

ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, Օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային երկրորդ լսումներ:

Հ. Մեսրոպյանը նշեց, որ երկրորդ հանրային լսման վերաբերյալ ծանուցումը կատարվել է Օրենքի և Որոշման պահանջներին համապատասխան, սահմանված ժամկետներում հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է «Առավոտ» օրաթերթի 16.01.2026 թվականի համարում, իսկ հայտարարությունը տեղադրվել է Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում: Նշեց նաև, որ շահագրգիռ հանրության կողմից գրավոր առաջարկություններ, դիտողություններ և կարծիքներ, ծանուցումից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում, շրջակա միջավայրի նախարարություն, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ չեն ներկայացվել:

Հաջորդիվ՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, որից հետո խոսքը փոխանցվեց «Նազարյան քուլինգ սիստեմս» ՍՊԸ-ի ճարտարապետ Ա Մակարյանին, ով համապարփակ ներկայացրեց նախատեսվող գործունեության մանրամասները:

Հարցուպատասխանին հաջորդեց ընդհանուր բնույթի քննարկում՝ հիմնականում ընթացակարգային, հետագա հարցերի վերաբերյալ, որից հետո հանրային լսման պատասխանատուն արձանագրեց, որ բարձրացված հարցադրումներին տրվեցին սպառիչ պատասխաններ և ներկայացնելով հետագա սպասվող ընթացակարգային գործողությունները, ամփոփեց և փակեց հանրային լսումը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան

«Մեղ Հաուզ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Արթուր Մինասյան